## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ Հոգեշնորհ Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյանը, որն ավարտել է համալսարանական կրթությունը Անգլիայում, հոկտեմբերի 1-ից նշանակվել է Սևանի Վազգենյան Դպրանոցի հոգևոր տեսչի պաշտոնակատար:

### Տ. ՄԿՐՏԻՉ ԱԲԵՂԱ ՊՌՈՇՅԱՆ
(ավազանի անունը՝ Հայկ)

Ծնվել է 1975 թ. էջմիածին քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում:

1993-1998 թթ. սովորել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցում:

1998-1999 թթ. ուսումը շարունակել է Մ. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

1999 թ. ձեռամբ Տ. Ռսկան արքեպս. Գալփաքյանի ձեռնադրվել է սարկավագ:

2000 թ. պաշտպանել է ավարտաճառ՝ «Խոսրով Անձևացու «Պատարագի մեկնության» աստվածաբանությունը» թեմայով:

2001 թ. ձեռամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

2001-2003 թթ. սովորել է Անգլիայի Մրֆիլդի քոլեջում և Լից համալսարանում՝ ստանալով բակալավրի աստիճան:

2003-2004 թթ. ուսումը շարունակել է Քարդիֆի (Անգլիա) համալսարանում՝ ստանալով աստվածաբանության մագիստրոսի աստիճան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*